ԳՐԱԿԱՆ

ՍԱՄՈՒԷԼ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ
Երեւանի Պետական Համալսարանի
Հայ բանասիրութեան ֆակուլտետի
առկայ երկրորդ կուրսի ուսանող

ՊԵՐՃ ՋԵՅԹՈՒՆՑԵԱՆԻ «ՎԵՐՋԻՆ ԱՐԵՒԱԳԱԼԸ» ՎԷՊԸ

Գրական բարձր արժէքները ծնւում են մեծ պահանջից, ժամանակի պարտադրանքով: Այս առումով ճշմարիտ արուեստի գործ է Պերճ Զեյթունցեանի «Վերջին արեւագալը» *երկը, որը ծնուել է հայ ժողովրդի ազատաբաղձ ձգտումների հզօր պոռթկման՝ Արցախեան շարժման օրերին:*

«Զոհրապը հիմա նման էր մի մարդու, որ վերջին ոյժերը հաւաքած, մագլցում էր լեռը, գագաթը մօտ է, մօտ, ահա թէ որքան մօտ է, բայց հանկարծ նրա փեշից կոպտօրէն բռնում են և գլորում դէպի ստորոտը: Գոնէ սիզիֆեան տանջանքի հեռանկար լիներ: Գոնէ տանջանքի անիմաստութիւնը լիներ: Չէ՛, այդ էլ չկար: Այլեւս չի մագլցի այդ լեռը: Ոչ ոք չի մագլցի...»: *Հէնց այսպէս է սկսւում վէպը, որտեղ պատկերուել է, իրաւամբ հայ* «Նորավէպի իշխան» *հռչակուած՝ Գրիգոր Զոհրապի կեանքի 1880-ականներից մինչեւ 1915 թ. ապրիլն ընկած ժամանակահատուածը:*

Հեղինակը իր երկն անուանել է վէպ, սակայն որոշ յատկանիշներով վէպերը տարբերւում են միմեանցից: Հէնց իր՝ Պ. Զեյթունցեանի վիպական կտաւները՝ «Մեզանից յետոյ», «Կլոդ Ռոբերտ Իզերլի», «Արշակ Երկրորդ», *տարբեր են ոչ միայն թեմատիկայով, այլեւ ձեւա-կառուցուածքային իւրայատկութիւններով ու ժանրային նկարագրով:* «Վերջին արեւագալը» *ծաւալուն երկում արձակագիրը մէկտեղ շաղել է և՛ պատմա-կենսագրական վէպի, և՛ վէպ-ժամանակագրութեան, և՛ քաղաքական վէպի բաղադրիչ որակները՝ ստեղծելով ըստ էութեան բարդ, միանգամայն ինքնատիպ և գեղարուեստական առումով բարձրարժէք գործ: Սա արձակագրի նոր վերելքն էր, արդի հայ վիպասանութեան մնայուն երկերից մէկը:*

Անշուշտ, Գր. Զոհրապի կեանքի ու գործունէութեան վիպականացումը առաջին հայացքից ենթադրում է պատմա-կենսագրական ժանրի նախապատուութիւն: Դա համեմատաբար դիւրամարս կը լիներ: Սակայն Պ. Զեյթունցեանը գնացել է դժուարին ճանապարհով՝ ներդաշնակել է վէպի քաղաքական ու պատմա-կենսագրական ժանրաձեւերը, տեղ-տեղ դիմել վէպ-ժամանակագրութիւն տեսակին, և արդիւնքում ստացել է վիպական ինքնատիպ մի որակ, որն ուղենշային երեւոյթ է հայ արդի արձակագրութեան զարգացման միտումների առումով:

Երբ քննութեան ենք առնում «Վերջին արեւագալը» *վէպում Զոհրապի կերպարը, տեսնում ենք, որ հեղինակն իր ստեղծագործութեան գլխաւոր հերոսին ներկայացնում է ոչ միայն պատկերուող ժամանակին յատուկ քաղաքական գործչի բնաւորութեամբ ու վարքագծով, այլեւ նրա կերպարի մէջ ներառում է մարդկային շատ յատկանիշներ և հոգեվիճակներ, որոնք վէպը առաւել գեղեցիկ, հարուստ և ամբողջական են դարձնում: Բերենք օրինակներ և փորձենք ուսումնասիրել դրանք:*

Յատկանշական են, օրինակ՝ Զոհրապը որպէս հայր և ամուսին, ազգային-քաղաքական գործիչ, գրող-հրապարախօս և վերջապէս՝ գաղափարական ընկեր:

Վէպում, բնական է, արծարծուած են հայերիս համար շատ ծանր ժամանակաշրջանի դէպքեր։ Զոհրապը, լինելով բանիմաց, խելացի և քաղաքական գործում հմտացած անհատականութիւն, հասկանում էր սպասուելիք աղետի ողբերգական հետեւանքները։ Գրողը դիպուկ է պատկերել Զոհրապի հոգեվիճակը։ Յատկապէս բնորոշ է վէպի հետեւեալ դրուագը, երբ 1914 թ. Յունիսի 28-ին սպանում են Ֆրանց Ֆերդինանդին, և դա դառնում է Առաջին համաշխարհային պատերազմի սկզբնաւորման շարժառիթը։ Զոհրապը լաւ հասկանում է, որ այս առիթը թուրքական իշխանութիւնները պիտի օգտագործեն իրենց մութ նպատակներն իրականացնելու համար։ Նա այդ օրերին ծանր աշխատանքից ու դառը մտորումներից յետոյ, յաճախ էր լիցքաթափուելու միջոցներ փնտռում։ Մի օր էլ գինետանը, ուր հաւաքուել էին հայ մշակոյթի ծանօթ գործիչներ, նա կոչ է անում փախչելով փրկուել, ապա դուրս է գալիս և արագ հեռանում։ Գինետան աշխատակիցը, ով լաւ էր ճանաչում Զոհրապին, դուրս է գալիս նրա հետեւից և ձայն տալով հարցնում, թէ ինչու ինքը չի հեռանում, իսկ Զոհրապը պատասխանում է, որ իր տեղը այնտեղ՝ Պոլսում է։

Այս դրուագում երեւում է հերոսի սէրն ու անհանգստութիւնը իր ընկերների նկատմամբ, որոնք կարող էին իր ժողովրդի համար դառնալ գոնէ գաղափարական առաջնորդներ։

Կասկած չի կարող լինել, որ հայ հանրութիւնը ծանօթ է Զոհրապ գրողին։ Նրա ստեղծագործութիւնները մեծ տեղ են գրաւում հայ գրականութեան մէջ։ Վէպում ներկայացուում է Զոհրապ գրողն ու հրապարախօսը, ով այդ ժամանակ ստեղծագործական ճգնաժամի մէջ էր։ «Վերջին արեւագալում» պատկերւում է, թէ ինչպէս է նա ժամերով նստում գրասեղանի առջեւ և մէկ տող անգամ չի կարողանում գրել, սակայն հրապարախօսական խօսքը երբեմն-երբեմն պոռթկում է և շատ հզօր յօդուածներ է ստացվում, այդ ժամանակահատուածում Զոհրապը գիտակցում է, որ իր վերջին ստեղծագործութիւնն է գրում։

Շատ աւելի խորն է Զոհրապ քաղաքական գործչի կերպարը, ով մերթ ուրախանում է յաջողութիւններից և մերթ խորը ընկճախտային իրավիճակներում է յայտնւում թուրքական իշխանութիւնների աննկարագրելի դաժանութիւններից։ Այդ լարուած իրավիճակները մեծապէս ազդել էին ընտանեկան յարաբերութիւնների վրայ։

Զեյթունցեանը դիպուկ նկարագրել է այն լուռ ցաւերը, որ ապրում էր մեծ արուեստագէտը հայ ժողովրդի համար կործանարար այդ օրերին։ Վէպում նկարագրւում է, թէ ինչպէս է Զոհրապը գալիս տուն, անտարբեր անցնում մեծ սենեակով, նստում գրասեղանի առջեւ և լուռ տառապում։ Կինն ու տղան անգամ չէին համարձակւում մի ձայն հանել։ Եւ մի օր էլ նրանք լուռ հեռանում են տնից, որը բնական էր դարձել։ Թերեւս կարելի է մտածել, որ Զոհրապը իր ընտանիքին նուիրուած չէր, բայց ամենեւին էլ այդպէս չէ, քանի որ նա իր մեծ ընտանիքի՝ հայրենիքի ցաւից հասել էր անհաւասարակշռութեան, սակայն այդ վիճակով էլ նա ծովահայեաց պատուհանից անդադար հետեւում էր հեռացող կնոջն ու տղային՝ մինչեւ նրանք կը կորչէին ամբոխի մէջ։

Ինչպէս տեսանք, Պ. Զեյթունցեանը վէպում կերպաւորել է հզօր և միեւնոյն ժամանակ փխրուն մարդուն՝ Գրիգոր Զոհրապին։ Հայ նշանաւոր գրողների կեանքին նուիրուած ստեղծագործութիւններում (Բակունց՝ Խաչատուր Աբովեան, Զարգանդ Դարեան՝ Սայաթ-Նովա, Կարէն Սիմոնեան՝ Միքայէլ Նալպանտեան) հեղինակները այս կամ այն չափով անդրադարձել են արտացոլուող ժամանակաշրջանների քաղաքական իրադարձութիւններին։

Այս առումով, յատկապէս, առանձնակի է Պ. Զեյթունցեանի մտայղացումը. Արցախի բռնակցումը Ատրպէյճանին մեր կորուստն է, ինչպէս որ մեր ամենամեծ կորուստն է 1915-ի եղեռնը՝ ամբողջ Արեւմտահայաստանի հայաթափումը։ Իսկ Պ. Զեյթունցեանը Գրիգոր Զոհրապի կենսապատումով արծարծում է հէնց այդ թեման՝ մեր ամենամեծ կորուստի թեման։

Զեյթունցեանի խիզախումը արժէքաւորում է կրկնակի, քանի որ ժանրի զարգացման ոլորտում գեղարուեստական լուրջ ներդրում լինելով հանդերձ, «Վերջին արեւագալն» ընդգրկումն է մի երկարատեւ պատմաշրջանի՝ 20-րդ դարի հայ պատմութեան հասարակական-քաղաքական, մարդկային ու բարոյական նշանակալից իրադարձութիւնները, հիւսում դրանց գեղարուեստական տարեգրութիւնը։

Կառուցուածքային այդ ձեւը վէպին իւրատեսակ դրամատիզմ է հաղորդել՝ ազատելով դէպքերի երկարաձիգ շղթայի կուտակումներից և, միաժամանակ, պատմական զարգացման ողջ ընթացքը տալով իր տրամաբանական ու ճշմարտացի հոլովումի ընդհանրութեամբ։ Ասել է թէ՝ նիւթի տարողունակութիւնը, երկարատեւ ժամանակային թուամիջոցը, պատմական բուռն ու հարուստ իրադարձութիւնները, բազմաքանակ հերոսների խայտաբղետութիւնն ու նրանց կապերի բարդութիւնը կենտրոնացնելու, աւելի «տեսանելի» դարձնելու և վիպական կուռ համակարգի մէջ դնելու համար Զեյթունցեանի ընտրած կառուցուածքային ձեւը միանգամայն յաջող է, իր տեսակի մէջ՝ ինքնատիպ։

Վէպը կազմուած է 18 մասերից կամ բաժիններից որոնք, վերնագրուած են 1915 կամ «յետադարձ հայացք» խորագիր-վերնագրերով, որոնք իրենց մէջ ամբողջացնում են մի կարեւոր և նշանակալից իրադարձութիւն։

Ըստ որում՝ անկարեւոր չէ նշել, որ վէպում «յետադարձ հայացքները» զբաղեցնելով ոչ քիչ տարածութիւն (եթէ ոչ կէսը, համենայն դէպս՝ մէկ երրորդից աւելին), չեն դառնում յուշապատումներ կամ սոսկական վերյուշային նկարագրութիւններ։ Դրանք կենդանի գործողութիւններ են, հաւաստի հանգամանքներ իրական հերոսներով՝ խտացուած իրենց ժամանակի ու միջավայրի համապատկերում։

Այնուհետեւ՝ ամէն անգամ դիմելով «յետադարձ հայացքի»՝ վիպասանը խզում չի ստեղծում տարբեր ժամանակների միջեւ, ինչ-որ արհեստական կամ միմեանցից չինական պարսպով առանձնացուած իրականութիւններ չի ներկայացնում։ Մեր առջեւ իր ամբողջ հասակով վերհառնում է արեւմտեան իրականութիւնը՝ պատմա-գեղարուեստական այնպիսի լուսարձակով, որը միասնութեան մէջ է պատկերում կեանքը, ժամանակն ու պատմութիւնը, ժողովրդի ու բազմաթիւ անհատականութիւնների ճակատագրերը։

Ուստի նպատակայարմար ենք համարում վէպը քննութեան առնելքրոնոտոպային առանձնայատկութեամբ։ Տարածաժամանակային որոշակի սահմաններում կերտուած «Վերջին արեւագալի» քրոնոտոպը, Զեյթունցեանի մեծագոյն վարպետութեան կնիքն է կրում։ Ամբողջ վէպը կառուցուած է տարածա-ժամանակային նուրբ կապերով։ Յետադարձ հայացքների սկզբունքով վէպի քրոնոտոպը ձեւակերտւում է, հիմնականում, տուն-խմբագրատուն, ապա նաեւ կայարան, գինետուն շղթայում և A2B1C2D1 բանաձեւով։

«Վերջին արեւագալը» վէպում քիչ չեն նաեւ այն էջերն ու հատուածները, որոնք ունեն հրապարակախօսական շունչ։ Վէպում Պ. Զեյթունցեանը հրապարակագրի իր տաղանդը սրել է պանիսլամիզմի ու պանթուրքիզմի տխրահռչակ գաղափարախօսութեան և ռազմատենչ-զավթողական քաղաքականութեան անխնայ մերկացման դրրւագներում, լայն պարագծերով ցոյց տուել նաեւ եւրոպական դիւանագիտութեան երկդիմութիւնը։ Յատկապէս թուրքական մեջլիսի անդամների, երիտթուրքերի պարագլուխների ու գերմանական դիւանագէտների կապերն ու փոխառնչութիւնները վէպում պատկերուած են հրապարակախօսութեան մեծ կրքով ու շիկացմամբ՝ ցայտուն երանգներ յաւելելով մի շարք կերպարների բնաւորութիւններին։

Ամենամեծ նուաճմանը Պ. Զեյթունցեանը, իհարկէ, հասել է գլխաւոր հերոսների հոգեբանական խտացումներով, արուեստի նուրբ միջոցների կիրառման շնորհիւ՝ գեղարուեստական-տիպական ընդհանրացումներով։ Գրիգոր Զոհրապը՝ վէպի կենտրոնական դէմքը, կինը՝ Կլարան, թուրքական պառլամենտի անդամ, Զոհրապի մտերիմ ու գաղափարակից Վարդգէսը, երիտթուրքերի առաջնորդներից

առանձնապէս «անեռոնի արջ» *Թալէաթը,* «կուզիկ թխսամայր» *Ճեմալ փաշան, Խալիլ պէյը, օտար դիւանագէտներից Մորգենթաուն, Վակենհայմը և ուրիշներ կերտուած են գեղարուեստական բազմազան հնարքներով, դարձել են շօշափելի անհատականութիւններ։*

Զոհրապը 80-ականների յայտնի գործիչների՝ Արփիարեանի, Կամսարականի, Բաշալեանի, Հրանդ Ասատուրի և միւսների միջավայրում, նրանց լուսաւորական-դեմոկրատական գործունէութիւնը, Զոհրապը ընտանիքում անձնական կեանքի ու կենցաղավարութեան մանրամասներ, Թուրքական պառլամենտը և Զոհրապը, վերջինիս պայքարը ազգային-հասարակական շահերի պաշտպանութեան դիրքերում, Զոհրապի մարդկային-քաղաքացիական դիմանկարը, այս և ուրիշ շատ խնդիրներ ու հանգամանքներ մարմնաւորուել են վէպում գլխաւոր հանգոյցի և արծարծուող հիմնահարցերի լուսաբանութեան դիտանկիւնից, մարմնաւորուել են գեղարուեստական բարձր մակարդակով։

Պ. Զեյթունցեանը հոգեբան-արուեստագէտ է ու պատահական կերպարներ և իրավիճակներ չի ստեղծում։ Նրա երկխօսութիւնները զարմանալի խտութիւն, հագեցուածութիւն ունեն և աչքի են ընկնում ներքին դրամատիզմով։ Կաշառում է վիպասանի խօսքի լարուածութիւնը։ Իսկ հերոսների փոխյարաբերութիւնների հասարակական-մարդկային բովանդակութիւնը, կարճ կամ երկար զրոյցների իմաստային խորքը, մենախօսութիւնների փիլիսոփայական շերտերի բազմագոյնութիւնը, վիպական բարդ կառոյցի մէջ գեղարուեստական ամենատարբեր հնարանքների փայլուն մուծումները հաստատում են Պ. Զեյթունցեանի անուրանալի վարպետութիւնը։

Գրողի ու նիւթի «մերձեցումը» *գեղարուեստում անչափ էական է։ Պարզ է՝ խօսքը ճշմարիտ գրողի մասին է, քանի որ, հակառակ դէպքում, առհասարակ ոչինչ չի կարող կայանալ։* «Վերջին արեւագալը» *վէպում, քիչ է ասել, թէ տեղի է ունեցել այդ* «մերձեցումը»։ *Ուղղակի տեղի է ունեցել մի* «հարազատ հանդիպում», *վաղ սպասուող, այնքան ցանկալի հանդիպում, որի արդիւնքը, անպայման, պէտք է արգասաւորուեր նման մի երկի գեղեցիկ ծնունդով։ Պ. Զեյթունցեանը քաջ գիտեր արեւմտահայ ամբողջ գրականութիւնը, դարասկզբի արձակը և պոեզիան։ Ոչ միայն Զոհրապի նովելներից ու բանաստեղծութիւններից քաղուած հատուածները, այլեւ Վարուժանից, Սիամանթոյից և արեւմտահայ միւս հեղինակներից բերուած տողերն ու մտքերը՝ ասես արիւնով գրուած, արիւնով ցողուած հնչում են վէպի համապատասխան էջերում այնքան տեղին, կարծես ստեղծուած են հէնց այդ նպատակով, հէնց այդ դրուագների համար։ Սա արդէն գրողի բախտաւորութիւնն է։ Իսկ առանց նիւթի* «հարազատութեան», *առանց ժամանակի ու միջավայրի և իրական-պատմական հերոսների անթերի ճանաչողութեան անկարելի էր հասնել այդպիսի արդիւնքի։*

Պ. Զեյթունցեանի «Վերջին արեւագալը» *վէպը այսօր հայրենասիրութեան պայծառ դասեր է տալիս։ Սովորեցնում է ապրել հաւատով ու արժանապատիւ։ Այնպէս, ինչպէս եղան, մաքառեցին ու նահատակուեցին վէպում կերտուած հերոսները։*